ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» դեկտեմբերի 2012թ. N----Ա

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«ԿՌՈՒՆԿ-ՄԱԼԱԹԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՀԱՇՎԱՐԿՎԱԾ ՇԱՀՈՒԹԱԲԱԺՆԻ ՎՃԱՐՈՒՄԻՑ ՄԱՍՆԱԿԻ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածով, Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի մարտի 18-ի հ.69-Ա որոշման 3-րդ կետով, «Կռունկ-Մալաթիա» փակ բաժնետիրական ընկերության ֆինանսական առողջացման նպատակով.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. «Կռունկ-Մալաթիա» փակ բաժնետիրական ընկերությանը մասնակի ազատել 2011 թվականի տնտեսական գործունեության արդյունքներով զուտ շահույթից հաշվարկված և Երևանի բյուջե վճարման ենթակա շահութաբաժնի վճարումից՝ 4315.2 հազ.դրամի չափով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

««ԿՌՈՒՆԿ-ՄԱԼԱԹԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՀԱՇՎԱՐԿՎԱԾ ՇԱՀՈՒԹԱԲԱԺՆԻ ՎՃԱՐՈՒՄԻՑ ՄԱՍՆԱԿԻ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևանի ավագանու 2012 թվականի մայիսի 30-ի հ.448-Ա և Երևանի քաղաքապետի 2012 թվականի հունիսի 7-ի հ.4403-Ա որոշումների համաձայն «Կռունկ-Մալաթիա» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) 2011 թվականի տարեկան գործունեության արդյունքներով առաջացած 31576.0 հազ. դրամի զուտ շահույթից 2012 թվականին Երևանի բյուջե պետք է վճարեր 6315.2 հազ. դրամի շահութաբաժին, սակայն վճարել է ընդամենը 2000.0 հազ. դրամ և պարտքը կազմում է 4315.2 հազ. դրամ:

Ընկերության կողմից հաշվեգրման սկզբունքով իրականացվող հաշվապահական հաշվառման արդյունքում նախորդ տարիներից կուտակվել է 168953.0 հազ. դրամի անհուսալի դեբիտորական պարտք բնակչության գծով, որի դիմաց հաշվարկվել և վճարվել է շահութահարկ:

Ընկերության ավտոպարկը հնացած է և աղբահանությունը ժամանակին իրականացնելու նպատակով ընկերության կողմից վարձակալվում են բեռնատարներ, որոնց օգտագործումը հանգեցնում է շահագործման լրացուցիչ մեծ ծախսերի: Մասնավորապես 2012թ. 9 ամսվա ընթացքում ծախսը կազմել է 18.0 մլն. դրամ:

Ընկերության կրեդիտորական պարտքերը 01.10.2012թ. դրությամբ կազմել են 34.6 մլն. դրամ (վառելիքի գծով 18.9 մլն. դրամ, շահութաբաժնի գծով 4.3 մլն. դրամ, պահեստամասերի գծով 2.4 մլն. դրամ, աշխատավարձի գծով 2.6 մլն. դրամ, վարձակալության գծով 2.5 մլն. դրամ, այլ կրեդիտորական պարտքերի գծով 3.9 մլն. դրամ): Անբավարար դրամական միջոցների պատճառով ընկերությունը հնարավորություն չի ունեցել վճարել շահութաբաժնի գումարը: Մատակարարներին ունեցած պարտքերի մասնակի մարման, ինչպես նաև ձմռան նախապատրաստական միջոցառումների իրականացման նպատակով, ընկերությունը վարկ տրամադրելու խնդրանքով դիմել է «Հայբիզնեսբանկ» ԲԲԸ-ին:

Հիմք ընդունելով ընկերության ֆինանսատնտեսական ցուցանիշները, սանմաքրման և աղբահանության աշխատանքների իրականացման ապահովման առաջնայնությունը, ընկերության ֆինանսական առողջացման նպատակով, առաջնորդվելով Երևանի ավագանու 2010 թվականի մարտի 18-ի հ.69-Ա որոշման 3-րդ կետով, առաջարկվում է «Կռունկ-Մալաթիա» փակ բաժնետիրական ընկերությանը մասնակի ազատել 2011 թվականի տնտեսական գործունեության արդյունքներով զուտ շահույթից հաշվարկված և Երևանի բյուջե վճարման ենթակա շահութաբաժնի վճարումից՝ 4315.2 հազ. դրամի չափով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

««ԿՌՈՒՆԿ-ՄԱԼԱԹԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՀԱՇՎԱՐԿՎԱԾ ՇԱՀՈՒԹԱԲԱԺՆԻ ՎՃԱՐՈՒՄԻՑ ՄԱՍՆԱԿԻ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ԱՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

««Կռունկ-Մալաթիա» փակ բաժնետիրական ընկերությանը 2011 թվականի տնտեսական գործունեության արդյունքներով հաշվարկված շահութաբաժնի վճարումից մասնակի ազատելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում նախատեսվում է եկամուտների նվազեցում 4315.2 հազ. դրամի:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

««ԿՌՈՒՆԿ-ՄԱԼԱԹԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՀԱՇՎԱՐԿՎԱԾ ՇԱՀՈՒԹԱԲԱԺՆԻ ՎՃԱՐՈՒՄԻՑ ՄԱՍՆԱԿԻ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

««Կռունկ-Մալաթիա» փակ բաժնետիրական ընկերությանը 2011 թվականի տնտեսական գործունեության արդյունքներով հաշվարկված շահութաբաժնի վճարումից մասնակի ազատելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ